



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«25» 11 2019 N 138-Ը

ք . Ե Ր Լ Կ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ
ՄԵՋ ԴՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Ստանդարտների ազգային ինստիտուտի տնօրենի պաշտոնակատարի 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՍ 1.4-2019 Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում. Կազմակերպության ստանդարտներ. Մշակման և ձևավորման ընդհանուր պահանջներ» ազգային ստանդարտի նախագծի մշակման աշխատանքային խումբ ստեղծելու մասին» N 123-Լ հրամանի համաձայն ստեղծված աշխատանքային խմբի N 3 արձանագրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ընդունել և 2020թ. հունվարի 1-ից գործողության մեջ դնել.
«ՀՍ 1.4-2019 Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում. Կազմակերպության ստանդարտներ. Մշակման և ձևավորման ընդհանուր պահանջներ» ազգային ստանդարտը:
2. 2020թ. հունվարի 1-ից դադարեցնել ներքոհիշյալ ազգային ստանդարտների գործողությունը.
ՀՍ 1.4-2001 Ստանդարտացման ազգային համակարգ. Կազմակերպության ստանդարտներ. Ընդհանուր դրույթներ,
ՀՍ 1.3-95 Ստանդարտացման ազգային համակարգ. Տեխնիկական պայմանների մշակման, համաձայնեցման, հաստատման և պետական գրանցման կարգը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել տնօրենի առաջին տեղակալ՝ Մ. Բզնունուն:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա. ԲԱԲԱՅԱՆ